ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/16411-2026

«01» 07. 2026թ

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ Ա/Ձ-ԻՆ
(հասցե՝ ՀՀ, Վեդի, Կասյան փ., 2
26/14, բն. բն 7
էլ. փոստ՝ shahinyanmurad@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/97-1 ծածկագրով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և **Տիգրան Հովհաննեսի Հակոբյան Ա/Ձ-ի** (այսուհետ՝ Վաճառողը) միջև 13.04.2026 թվականին կնքված **«ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/97-1»** ծածկագրով «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի» 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով և ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, որի մատուցման վերջնաժամկետ է սահմանված 2026 թվականի մայիսի 4-ը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 33-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Վաճառողը պարտավոր ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված Գնորդի 900011032050 գանձապետական հաշվեհամարին վճարել տույժ՝ 9,720 ՀՀ դրամ և տուգանք՝ 2,700 ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Ղեկավարվելով վերոհիշյալ իրավական հիմքերով և Պայմանագրի 2.1.7-րդ և 2.1.7.1-ի բ/ենթակետով՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հրաժարվում է **Տիգրան Հովհաննեսի Հակոբյան Ա/Ձ** -ի հետ կնքված պայմանագրից, համարելով այն լուծված 540 000 ՀՀ դրամ գումարի չափով, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվեն Որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալու հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ **Տիգրան Հովհաննեսի Հակոբյան Ա/Ձ-ին** տրվում է 5 օրացուցային օր պայմանագրի ապահովման՝ 65 000 ՀՀ դրամը և որակավորման ապահովման՝ 97 500 ՀՀ դրամը (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված N900008000664 գանձապետական հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու և վճարման անդորրագրերը ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Մհեր Մկրտչյան 5) հասցով ներկայացնելու դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

Signed by: NASIBYAN HAYKAZ 1205870326

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

Կատարող՝
Գնումների համակարգման բաժնի պետ, Աննա Ղարիբջանյան
011597194